ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2024 թվականի N 2081 - Ն

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 4-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 981-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի «զ» կետի, 7-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 4-ի շրջանակներում Մ-2, Երևան- Երասխ-Նորավան-Տաթև-Կապան-Մեղրի- ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի մաս հանդիսացող՝ Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման (այսուհետ՝ ծրագիր) նպատակով սույն որոշման N 1 հավելվածում նշված հողամասերի սույն որոշման

N 2 հավելվածում նշված հատվածների (այսուհետ՝ օտարվող սեփականություն) նկատմամբ ճանաչել հանրության գերակա շահ՝ հետևյալ հիմնավորումներով.

1) ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի, այլ գույքային իրավունքներ ունեցող անձանց շահերի նկատմամբ, քանի որ՝

ա. ծրագիրը նպատակաուղղված է համապետական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհաշինական ծրագրի իրականացման ապահովմանը,

բ. ծրագրի իրականացման արդյունքում կկառուցվի միջազգային չափորոշիչներին համապատասխանող ճանապարհ, կկրճատվի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի երկարությունը, ինչի արդյունքում կնվազի երթևեկության տևողությունը, կմեծանա առևտրի շրջանառությունն ու մրցակցությունը, կնվազեն բեռնափոխադրումների, ուղևորափոխադրումների ծախսերը, առավել հասանելի կդառնան սոցիալական ծառայությունները, շուկաները, կբացվեն նոր աշխատատեղեր, կստեղծվեն բարենպաստ տրանսպորտային պայմաններ հարակից բնակավայրերի բնակիչների համար, ազդակիր համայնքներում կտեղադրվեն հաղորդակցուղիների նոր համակարգեր, կմեծանա Հայաստանի Հանրապետության տարածքով բեռների տարանցիկ փոխադրումների հոսքը.

2) ծրագրի արդյունավետ իրականացումը չի կարող ապահովվել առանց օտարվող սեփականությունների օտարման, քանի որ վերջիններս գտնվում են ծրագրի շրջանակներում կառուցվող ճանապարհահատվածի սույն որոշման N 2 հավելվածում նշված օտարման գոտու սահմաններում, և անհնար է իրագործել ծրագիրն առանց տվյալ տարածքների օտարման.

3) օտարվող սեփականությունների նկատմամբ ճանաչված հանրության գերակա շահը չհիմնավորված վնաս չի պատճառում օտարվող սեփականության սեփականատերերին:

2. Սահմանել, որ՝

1) օտարվող սեփականությունը ձեռք բերողը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես է գալիս «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը.

2) օտարվող սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնաժամկետը 2025 թվականի դեկտեմբերի 1-ն է.

3) օտարվող սեփականության օտարման գործառույթների իրականացումը համակարգող և սեփականության օտարման գործառույթների իրականացման համար պատասխանատու պետական մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է.

4) սեփականության նկարագրության արձանագրության կազմման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1275-Ն որոշմամբ սահմանված կարգով և որոշմամբ սահմանված նկարագրության արձանագրության օրինակելի ձևով:

3. Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 4-ի շրջանակներում կառուցվող Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի օտարման գոտին՝ համաձայն N 2 հավելվածի:

4. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում սույն որոշումը պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվական հունիսի 30-ի «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 4-ի շրջանակներում Հայաստանի հանրապետության Սյունիքի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» N 981-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները .

1) որոշման 1-ին կետում «Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման» բառերը փոխարինել «Երևան-Երասխ-Նորավան-Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման» բառերով.

2) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝

«2. Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 4-ի շրջանակներում կառուցվող Սիսիան-Քաջարան ճանապարհա-հատվածի օտարման գոտին՝ համաձայն N 2 հավելվածի:».

3) որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում «2024 թվականի դեկտեմբերի 30-ն է» բառերը և թվերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 1-ն է» բառերով և թվերով.

4) որոշման N 1 հավելվածի 13-17-րդ, 19-րդ, 30-րդ, 47-րդ, 49-50-րդ, 65-րդ, 67-69-րդ, 75-րդ, 77-81-րդ, 88-158-րդ, 170-րդ, 173-րդ, 178-րդ, 191-րդ, 193-րդ, 205-րդ, 207-րդ, 219-րդ, 221-րդ, 225-րդ, 227-228-րդ, 230-րդ, 232-րդ, 239-րդ, 253-րդ, 255-րդ, 289-րդ, 292-րդ, 305-307-րդ, 309-311-րդ, 313-314-րդ, 316-րդ, 319-320-րդ, 322-324-րդ, 327-րդ, 331-333-րդ, 338-րդ, 340-342-րդ, 344-351-րդ, 354-356-րդ, 358-359-րդ, 367-368-րդ, 373-րդ, 376-րդ, 378-380-րդ, 386-րդ, 390-391-րդ, 395-րդ, 397-րդ, 402-րդ, 404-րդ, 407-րդ, 409-րդ, 411-419-րդ, 424-րդ, 431-435-րդ, 437-439-րդ, 441-442-րդ, 445-446-րդ, 448-449-րդ, 451-րդ, 456-461-րդ, 465-րդ, 470-473-րդ, 477-483-րդ, 489-րդ, 492-րդ, 503-րդ, 521-524-րդ, 526-րդ, 546-րդ, 553-566-րդ, 568-570-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

5) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ